
**ԱՂԳԱՅԻՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ՀԱՅԵՑԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ**

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ

ՀԵՀ Իրավագիտության ամբիոն Հայցորդ,
DOI: 10.63925/18294847-2026.bi21-13

Ամփոփագիր .Հոդվածը նվիրված է «անվտանգություն» հասկացության վերլուծության արդյունքում պետական անվտանգության և նրա մաս կազմող բնապահպանական անվտանգությանը: Ներկայացվել է ազգային անվտանգության ծագումնաբանությունը և զարգացումը, որի մեջ կարևոր տեղ է զբաղեցնում բնապահպանական անվտանգությունը: Վերլուծության մեջ ներառվել է «շահ» հասկացության, պետության շահի և բնապահպանական շահի իրավական հիմնավորումները: Ներկայացվել է գործող օրենսդրության և պետական ռազմավարության մեջ, բնապահպանական շահով պայմանավորված, «բնապահպանական անվտանգություն» հասկացության ինստիտուցիոնալացման անհրաժեշտությունը: Կատարվել են համապատասխան հետևություններ օրենսդրական բացերի վերաբերյալ, և ներկայացվել են բնապահպանական շահի հայեցակարգումը և պաշտպանության մեթոդները:

Հիմնաբառեր. անվտանգություն, ազգային անվտանգություն, բնապահպանական անվտանգություն, շահ, ազգային շահ, բնապահպանական շահ, բնապահպանական ռազմավարություն, բնապահպանական ինքնիշխանություն:

Ներածություն

Հոդվածում հետազոտվող հիմնախնդրի **արդիականությունն** այն է, որ Հայաստանի Հանրապետության ներկայիս բնապահպանական իրավական քաղաքականությունը բնութագրվում է մի շարք էական թերություններով, որոնք ընդգծում են բնապահպանական անվտանգությունն ապահովող ինստիտուցիոնալ և իրավական շրջանակի հետագա զարգացման անհրաժեշտությունը:

Օբյեկտը՝ պետության ազգային և բնապահպանական անվտանգության սահմանումը:

Առարկան՝ բնապահպանական շահի հիման վրա բնապահպանական անվտանգության առաջնահերթությունները:

Նպատակը՝ ձևակերպել Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի հայեցակարգումը և պաշտպանության իրավական մեթոդները:

Մարդու կենսագործունեության անվտանգության հարցերը միշտ համարվել են հասարակական կյանքի առաջնահերթություն: Անվտանգությունն սկզբնապես հասկացվել է որպես վտանգի բացակայության վիճակ՝ պայմանավորված համապատասխան միջոցներով: Այն մարդուն հասարակության մեջ միավորելու հիմնական պատճառներից մեկն էր, այդ թվում՝ «մարդկանց և համայնքների գործունեության առաջնահերթ դրդապատճառներից»¹:

Անվտանգության առաջին հայեցակարգային վերլուծությունը, թերևս, ձեռնարկել է Թոմաս Հոբսը, ով ուսումնասիրել է անվտանգության ծագումը՝ զուտ ֆիզիկական երևույթից մինչև հասարակական, և ցույց է տվել անհատի, հասարակության և պետության անվտանգության փոխկապակցվածությունն ու փոխկախվածությունը: Անվտանգությունը դիտարկելով որպես սոցիալական երևույթ՝ Թ.Հոբսը հաստատել է դրա ինստիտուցիոնալ բնույթը և անվտանգության ապահովման արդյունավետությունը կապել է հասարակության կողմից ձևավորած վարքագծի նորմերի հետ:

Երկար ժամանակ անվտանգությունը համարվում էր պետության բացառիկ իրավասությունը: Այս առումով ուշագրավ է Հայաստանի Հանրապետության օրինակը. պետության ձևավորումից անվտանգությունը պետության բացառիկ գործառույթն էր: Այսպես, դեռ Հին Հայաստանում կարևորվել են հետախուզական բնույթի գործառույթները, որոնց արդյունավետության հետևանքով հնարավոր է եղել ապահովել երկրի պետական անվտանգության համակարգի առջև ծառայած հիմնախնդիրների լուծումը: Պատմական փաստերը վկայում են, որ դեռ հայկական պետականության արշալույսին՝ Արարատյան պետականության ժամանակաշրջանում, լուրջ քայլեր են արվել հետախուզության կազմակերպման բնագավառում, ինչը հնարավոր է դարձրել արդյունավետորեն հակազդել Ասորեստանի և այլ երկրների հետախուզական կառույցների կողմից ձեռնարկված

¹ Свободная мысль. 1994. №4. С. 16.

հակահայկական գործողություններին, ինչի մասին են փաստում առկա սեպագիր արձանագրությունները²:

Դեռևս 12-րդ դարի վերջերին Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում ներկայացնում է պետական իշխանության հայեցակարգը, օրենքների ժողովածուում մեծ տեղ է հատկացնում պետական ինքնիշխանությանը, ինչպես նաև պետության ձևավորման հայեցակարգին, ինչն արտահայտվում է նրա օրենքներով: Գոշն այս օրենքներով ձգտում էր հայ իշխաններին և ժողովրդին դրդել պետական անկախության վերականգնման: Նա պետության գլուխ համարում էր թագավորին, որը պետք է ունենար միանձնյա կառավարման բոլոր լծակները: Երկրորդ օրենքն իրավամբ ամենից հետաքրքիրներից է, քանի որ Գոշն խոսում է այլ երկրներից հարկ վերցնելու և այլ ժողովուրդներ հպատակեցնելու և ոչ թե հպատակվելու մասին, և սա այնպիսի ժամանակներում, երբ հայ ժողովուրդը գտնվում էր օտարերկրյա պետությունների ազդեցության տակ: Գոշն ինքնիշխանության կարևոր հատկանիշներից է համարում պետության գերիշխանությունը հպատակ ժողովուրդների հանդեպ և արտաքին հարաբերություններում լիակատար ինքնուրույնությունը: Պետությունը պետք է ունենա ամբողջական հսկողություն ներքին կյանքի վրա³:

Անվտանգության խնդրի նկատմամբ այս հայեցակարգային մոտեցումը հանգեցրել է համապատասխան պետական ինստիտուտների զարգացմանը: Դժբախտաբար, այս մոտեցումը շարունակվեց խորհրդային ժամանակաշրջանում, ինչը բացատրում է անվտանգության բնագավառի գիտելիքների չափազանց թույլ զարգացումը: Հետաքրքիր է, որ նույնիսկ այնպիսի հիմնարար հանրագիտարանային հրատարակություններում, ինչպիսիք են «Խորհրդային ռազմական հանրագիտարանը» և «Ռազմական հանրագիտարանային բառարանը», «անվտանգություն» հասկացությունը բացակայում է: Անվտանգության խնդիրը հանգեցվել է զուտ տեխնիկական ընթացակարգի: Հենց այսպես է «անվտանգությունը» մեկնաբանվում Ս.Ի. Օժեգովի հեղինակավոր «Ռուսաց լեզվի բառարանում», մինչդեռ Է.Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանում» և «Հանրագիտարանային փիլիսոփայական բառարանում» այդ հասկացությունն

² Տե՛ս Վ.Հ. Վիրաբյան, ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920թթ., Երևան ԵՊՀ 2015թ., էջ 15-16:

³ Տե՛ս Մ.Մ. Թելունց, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (93), Երևան 1997թ., էջ 177-185:

ընդհանրապես չի ներառվել, ինչը պարզապես նշանակում է, որ այս երևույթը չի համարվել գաղափարախոսական ենթատեքստ ունեցող սոցիալական երևույթ:

ԻՍԿՄ փլուզումից հետո Հայաստանի Հանրապետությունում անվտանգության նկատմամբ տեսական հետաքրքրությունը կտրուկ աճել է: Ակնհայտ է, որ անվտանգության և դրա ապահովման հայեցակարգային մոտեցման փոփոխությունը, որը հիմնված է լիբերալ հումանիզմի սկզբունքների վրա, անվտանգության շրջանակներում ներառում է ոչ միայն պետությունը, այլև քաղաքացիական հասարակությունը և անհատներին: Այս ամենն արդիական է դարձրել անվտանգության սոցիալական, քաղաքական և իրավական ասպեկտներին նվիրված տեսական հետազոտությունները: Նշված ասպեկտները հետաքրքրել են այնպիսի հետազոտողների, ինչպիսիք են Ա. Վ. Վոժեննիկովը, Յու. Ի. Դերյուգինը, Վ. Լ. Մանիլովը, Վ. Ի. Միտրոխինը, Գ. Վ. Օսիպովը, Վ. Ս. Փիրումովը, Ա. Ա. Պրոխոժևը, Վ. Ա. Ռուբանովը, Լ. Ի. Շերշենևը և ուրիշներ: Արդյունքում, «անվտանգություն» հասկացությունը փոխվել է: Հաճախ այն հասկացվում է որպես «իրավիճակ, որտեղ ապահովվում է պետության և քաղաքացիական հասարակության կենսական կարևոր շահերի պաշտպանությունը տնտեսական, քաղաքական, ռազմական, բնապահպանական, մարդասիրական և այլ ոլորտներում»⁴: Ոմանք անվտանգությունը սահմանում են որպես «անհատների, սոցիալական խմբերի, պետության, հասարակության և քաղաքակրթության կենսական միջավայրի, պատվի, արժանապատվության և արժեքների պաշտպանության միջոց»⁵: «Անվտանգության մասին» Ռուսաստանի Դաշնության օրենքն անվտանգությունը սահմանում է որպես «անհատի, հասարակության և պետության կենսական շահերի պաշտպանության վիճակ արտաքին և ներքին սպառնալիքներից»:

Մեր կարծիքով, անվտանգությունը՝ որպես սոցիալ-քաղաքական երևույթ, նշանակում է ոչ այլ ինչ, քան պաշտպանության վիճակ, որն իրացվում է բարոյականության, քաղաքականության, իրավունքի, տնտեսագիտության և այլնի մեջ ինստիտուցիոնալ կերպով ամրագրված սոցիալական հարաբերությունների համակարգի միջոցով: Այսպես, այսօր անհատը, հասարակությունը և պետությունը դիտարկվում են որպես անվտանգության հիմնական օբյեկտներ: Միևնույն ժամանակ, անվտանգության սուբյեկտը

⁴ Ст'ю Словарь специальных терминов. М., 1994.

⁵ Ст'ю Митрохин В.И. Национальная безопасность России // Интеллектуальный мир. 1995. №6.

կարող է փոխվել՝ պայմանավորված բազմաթիվ գործոններով: Անվտանգության սոցիալական էությունը նրա հիմնարար տարրի՝ շահի մեջ է, որը դիտարկվում է որպես գիտակցված սոցիալական կարիք, որը ձևավորվում է անվտանգության սուբյեկտի կողմից իր սոցիալական գոյության արտացոլման արդյունքում: Միևնույն ժամանակ, շահի սոցիալական բնույթը որոշում է դրա իրականացման սոցիալական մեթոդները: Պետության մեջ շահի պաշտպանությունը դառնում է համակարգված, ապահովվում է ինստիտուցիոնալ համակարգի ձևավորմամբ՝ տնտեսական համակարգ, քաղաքական համակարգ և իրավական համակարգ: Ակնհայտ է, որ «շահը» վերաբերում է հասարակական գիտակցության ոլորտին, անվտանգության համակարգի առաջացման մեջ հիմնարար դեր է խաղում հայեցակարգային գաղափարախոսական գործոնը, որը տարբեր դարաշրջաններում ենթարկվել է այնպիսի փոփոխությունների, ինչպիսիք են բարոյականությունը, կրոնը, փիլիսոփայությունը և քաղաքական գաղափարախոսությունը:

Ըստ էության, անվտանգության համակարգի ձևավորումն սկսվում է անվտանգության ուսմունքից կամ անվտանգության տեսությունից, որը սահմանում է անվտանգության օբյեկտներն ու սուբյեկտները, անվտանգության սուբյեկտների կենսական կարևոր շահերին սպառնացող հիմնական սպառնալիքները և դրանք պաշտպանելու միջոցները: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ անվտանգության տեսությունն ինքնին որոշվում է հասարակական հարաբերությունների ձևավորվող համակարգով, այս կամ այն սոցիալական սուբյեկտների համապատասխանությամբ: Քանի որ հասարակական հարաբերությունների բոլոր մասնակիցների շահերը չեն կարող հավասարապես լիարժեք իրացվել, բնականաբար, ի հայտ են գալիս այլընտրանքային անվտանգության ուսմունքներ, որոնք տարբեր կերպ են վերլուծում անվտանգության համակարգի հիմնարար պարադիգմատիկ բաղադրիչները: Համապատասխանաբար, հասարակական հարաբերությունների համակարգի փոփոխությունը նշանակում է նաև անվտանգության ուսմունքի և համակարգի փոփոխություն:

Այս մեթոդաբանական սկզբունքների շրջանակներում պարզ է դառնում, որ գոյություն չունի համընդհանուր անվտանգության համակարգ: Ազգային, տարածաշրջանային և միջազգային անվտանգության համակարգերը, իրենց սոցիալական բնույթին համապատասխան, գտնվում են քաղաքական, տնտեսական և իրավական գործընթացների զարգացման մեջ, հետևաբար, ենթակա են մշտական ինստիտուցիոնալ

փոփոխությունների՝ ապահովելով իրադրության նոր պայմաններում անհատների, հասարակության և պետության (ազգային անվտանգություն), տարածաշրջանային շահերով միավորված պետությունների խմբերի (տարածաշրջանային անվտանգություն) և համաշխարհային հանրության (միջազգային անվտանգություն) կենսական կարևոր շահերի պաշտպանությունը: Քանի որ անվտանգության համակարգի ներդրումն ու գործունեությունն ապահովվում են համեմատաբար պահպանողական կայունություն ունեցող համապատասխան հաստատությունների և ինստիտուտների կողմից, ապա այն կարող է հետ մնալ հարաբերությունների իրական զարգացումից: Ավելին, նոր հաստատությունների և ինստիտուտների ի հայտ գալն անվտանգության համակարգի զարգացման կարևորագույն հատկանիշներից մեկն է: Այն սովորաբար տեղի է ունենում պատմական շրջադարձային պահերի ընթացքում:

Ձևավորված տեսական հասկացությունների համաձայն՝ ազգի կենսագործունեությունն ունի բազմաթիվ ասպեկտներ, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է ազգային անվտանգության առարկան: Այս իմաստով անվտանգության տեսակը ոչ այլ ինչ է, քան ազգային անվտանգության տեսակ կամ ասպեկտ: Ազգային անվտանգության ժամանակակից դասակարգումն ըստ կենսագործունեության ոլորտի ներառում է հետևյալ տեսակները՝ ռազմական անվտանգություն, սոցիալ-քաղաքական անվտանգություն, տեղեկատվական անվտանգություն, տնտեսական անվտանգություն և բնապահպանական անվտանգություն⁶:

Բնապահպանական քաղաքականության բովանդակությունը որոշվում է պետության ազգային շահերով, հետևաբար, մտնում է երկրի ազգային անվտանգության շրջանակի մեջ: Միևնույն ժամանակ, քանի որ բնապահպանական ճգնաժամը գլոբալ բնույթ է կրում, ուստի բնապահպանական հարաբերությունները կարգավորվում են միջազգային ինստիտուտների կողմից, որոնցում ՄԱԿ-ը և այլ միջազգային կազմակերպություններ զգալի դեր են խաղում: Միջազգային իրավունքում բնապահպանական անվտանգության իրավական ինստիտուցիոնալացումը՝ համապատասխան միջազգային նորմատիվ իրավական փաստաթղթերն ստորագրած պետությունների իրավունքների, ազատությունների և պարտավորությունների նորմատիվ արտացոլման տեսքով, սահմանափակում է պետական բնապահպանական քաղաքականության շրջանակը՝

⁶ Ст'ю Общая теория национальной безопасности: Учебник / Под ред. А.А. Прохожева. М., 2002. С. 40.

ամրագրելով հիմնական բովանդակությունը: Սակայն միջազգային պայմանագրերի և համաձայնագրերի ստորագրումը, բնապահպանական գործընթացները կարգավորող միջազգային կոնվենցիաներին միանալը և այլն, հիմնականում թելադրվում են ազգային շահերով: Հետևաբար, բնապահպանական քաղաքականությունը, չնայած դրա ձևավորման վրա ազդող գլոբալ գործոններին, հիմնականում որոշվում է ազգային շահերով, որն էլ էկոլոգիան դարձնում է ազգային անվտանգության տարրերից մեկը: Հետևաբար, որոշակի պատմական ժամանակաշրջաններում հասարակական կյանքի այս երևույթի արդիականությունով և պահանջարկով պայմանավարված՝ բնապահպանությունը կարող է տարբեր կերպ դիտարկվել ազգային անվտանգության առաջնահերթությունների շարքում: Ակնհայտ է, որ այս առաջնահերթությունների իրացումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե դրանք ինստիտուցիոնալ կերպով արտահայտվեն օրենքներում և իրավակիրառ գործունեությունում: Այս իմաստով, բնապահպանական անվտանգությունը կարելի է դիտարկել որպես ազգային անվտանգության ինստիտուտ, որը նախատեսված է երկրի ազգային անվտանգության դոկտրինում արտահայտված, ազգային անվտանգության ապահովման նպատակներին համապատասխան, բնապահպանական գործընթացները կարգավորելու համար:

Կարծում ենք, որ այս համատեքստում գլխավոր հարցը «ազգային շահ» կատեգորիայի սահմանումն է, որը պետք է դիտարկել որպես ազգային անվտանգության հիմնարար ինստիտուտ, որը ձևավորում է ամբողջ համակարգի նորմատիվ-իրավական ապահովումը: Հայասաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը սահմանում է Հայասաստանի Հանրապետության ազգային շահերը որպես «պետության ներքին և արտաքին կարիքների ամբողջություն՝ անհատի, հասարակության և պետության անվտանգությունն ու կայուն զարգացումն ապահովելու համար»⁷: Ռազմավարության սկզբունքների ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում այդ շահերի իրացմանն սպառնացող իրական և պոտենցիալ սպառնալիքների ճանաչման միջոցով: Ազգային շահերը և դրանց սպառնալիքները հայեցակարգվում են պետության ազգային անվտանգության պահպանման և զարգացման ռազմավարական նպատակներն ու խնդիրները սահմանող փաստաթղթում, որը գաղափարապես հիմնված է ձևակերպված

⁷ Տե՛ս Հայասաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, 2007թ., Արլիս.ամ

շահերի և սպառնալիքների վրա: Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունում այս փաստաթուղթը Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունն է: Ազգային շահերի ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում համապատասխան նորմատիվ-իրավական փաստաթղթերի ընդունման և ազգային շահերը պաշտպանելու, սպառնալիքներն ու դրանց ռիսկերը կանխելու համար ուժերի ու միջոցների ստեղծման միջոցով: Ժողովրդավարական հասարակություններում նման ինստիտուցիոնալացումը տեղի է ունենում նաև տեղական ինքնակառավարման մարմինների այս գործընթացում ներգրավման միջոցով:

Առօրյա գործածության մեջ «օգուտ», «շահ» բառերն արտացոլում են որևէ բանի նկատմամբ հատուկ ուշադրություն, դրա էության մեջ խորանալու, սովորելու կամ հասկանալու ցանկություն՝ հետաքրքրություն, նշանակություն, կարիքներ, պահանջներ, օգուտ կամ շահ⁸: Այնուամենայնիվ, վաղուց է նշվել, որ ժամանակակից գիտական խոսույթում. «Սկսած 17-րդ դարից՝ Եվրոպայում ազգային պետությունների ձևավորման ժամանակներից մինչ օրս թվում է, թե չկա որևէ այլ հասկացություն, որն այդքան հաճախ օգտագործվի դիվանագիտական խոսույթում... Միաժամանակ, որքան էլ պարադոքսալ թվա, չկա ավելի անորոշ, ավելի մշուշոտ և ցրված, ավելի երկիմաստ և հակասական հասկացություն»⁹:

Ազգային շահի սահմանման բազմաթիվ տեսակետներից հատկապես ուշագրավ է Բ. Ռակիցկիի դիրքորոշումը, ով կարծում է, որ ազգային շահն ունի սոցիալ-մշակութային հիմք: Ընդգծելով Ռուսաստանի մշակույթի, կենսակերպի և պետականության յուրահատկությունը՝ նա գրում է, որ ազգային շահը արմատավորված է ռուսական մշակույթում, միաժամանակ՝ եվրոպական և ո՛չ եվրոպական, արևելյան և ո՛չ արևելյան: Սակայն նա կարծում է, որ սխալ կլինի փորձել ռուսական ազգային մշակույթից որպես արմատ սահմանել Ռուսաստանի ազգային շահը, այդ թվում՝ ժամանակակից Ռուսաստանի: Նա կարծում է, որ ազգային շահը շատ ավելի պարզ է, քան ազգային մշակույթը: Ռուս ժողովուրդը միասնական է, բայց ոչ միաձույլ, ունեն կառուցվածք, սակայն ժողովրդի մշտական մասնատումն ակնհայտ է: «Ռուսաստանի ժողովուրդ» կոչվող միասնության տարբեր մասերի շահերն իրականություն են: Սակայն նա առաջարկում է այլ

⁸Տե՛ս Է.Բ.Ադայան Արդի հայերենի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ. 1976թ.,

⁹ Տե՛ս Поздняков Э. Национальные интересы: теория и практика. М., 1991. С. 3.

մակարդակներում փնտրել այն հարցերի պատասխանները, թե արդյո՞ք այս բազմազան շահերից այն կողմ գոյություն ունի ընդհանուր շահ, որը կարող է մեկնաբանվել որպես ամբողջ Ռուսաստանի, նրա բոլոր ժողովրդի ազգային և պետական շահ¹⁰:

Մեր կարծիքով, ազգային շահերը պետք է սահմանվեն ավելի լայն համատեքստում՝ որպես մարդկանց հասարակական համայնքի կենսագործունեության նյութական, հոգևոր և բարոյական հիմքերի պահպանում և կատարելագործում, տնտեսական բարգավաճման և ներքին արտադրողների պաշտպանության համար բարենպաստ պայմաններ ապահովելու անհրաժեշտություն, ինչպես նաև երկրի աշխարհաքաղաքական դիրքով և տնտեսական կապերի ու հարաբերությունների համակարգում նրա զբաղեցրած տեղով թելադրված գործառույթների և պարտավորությունների կատարում:

Պետական իրավական քաղաքականության հիմքն ազգային շահն է, համապատասխանաբար, բնապահպանական իրավական քաղաքականությանը՝ բնապահպանական շահը: Առանց հայեցակարգային, պաշտոնապես ընդունված բնապահպանական շահի սահմանման՝ դժվար է խոսել բնապահպանական ոլորտում պետական իշխանության մարմինների, հանրային ինքնակառավարման և քաղաքացիների գործունեության համակարգված բնույթի մասին, իսկ այս ոլորտը կարգավորող օրենսդրությունն օբյեկտիվորեն օժանդակող նշանակություն ունի՝ ապահովելով այլ տեսակի շահերի իրացումը:

Ակնհայտ է, որ բնապահպանական շահի սահմանումը պետք է հիմնված լինի Հայաստանի Հանրապետությունում և աշխարհում բնապահպանական իրավիճակի համապարփակ համակարգային վերլուծության, բնապահպանական սպառնալիքներն ու ռիսկերը ձևավորող տեխնաժին, սոցիալական և քաղաքական գործոնների ամբողջության, ինչպես նաև բնապահպանական իրավիճակի քաղաքական գնահատման վրա, որի արդյունքում պետք է մշակվի երկրի բնապահպանական շահի պետական հայեցակարգային մոդել, որն այս ոլորտում պետական ռազմավարության հիմքն է:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը չի սահմանում բնապահպանական շահերը: Վերոնշյալ փաստաթղթի 2-րդ հոդվածը սահմանում է ազգային անվտանգության ապահովման գործոններն ու գործողությունները, որոնք ներառում են՝ **«Պետության և ժողովրդի անվտանգության ոլորտում.**

¹⁰ Ст'у Ракитский Б. Культура и интерес нации // Вопросы экономики. 1994. №2.

- ներկա և գալիք սերունդների կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը,
- բնական պաշարների պահպանումն ու արդյունավետ օգտագործումը, բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավումը»:

Որպես ազգային անվտանգության դեմ ուղղված ներքին սպառնալիք՝ ամրագրվել են բնապահպանական խնդիրները և բնական պաշարների անարդյունավետ կառավարումը. Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական, հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրագետ օգտագործումը¹¹:

Մինևույն ժամանակ, փաստաթուղթում, որպես ներքին անվտանգության ռազմավարություն, ամրագրվել են մաքուր **շրջակա միջավայրի**, բնական պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների ու Սևանա լճի բնահամակարգի վերականգնմանը, պահպանությանը և օպտիմալ օգտագործմանը, անտառածածկույթի պահպանմանն ու վերականգնմանը, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործմանը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահման համապարփակ վերահսկմանը, բնական և տեխնածին աղետների կանխատեսմանն ու վաղ ազդարարմանը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացմանը, արտակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծմանը, բնակչության բնապահպանական իրազեկության ու կրթվածության ապահովմանը վերբերող խնդիրներ¹²:

Հատկանշական է, որ նախորդ փաստաթուղթը՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը, բնապահպանական շահերը սահմանում էր հետևյալ կերպ. «Հայաստանի ազգային շահերը բնապահպանական ոլորտում կայանում են շրջակա միջավայրի պահպանման և բարելավման մեջ»: Հայեցակարգում նաև մանրամասն նկարագրված էին այդ շահերին սպառնացող սպառնալիքները. «Հայաստանի Հանրապետությունը կարևորում է լեռնահանքային արդյունաբերության, բնական,

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատված ՀՀ Նախագահի 2007թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:

¹² Տեսնել նույն տեղում:

հատկապես՝ անտառային և ջրային պաշարների օգտագործման արդյունավետության բարձրացումը: Բնապահպանական անվտանգության տեսակետից առանձնահատուկ նշանակություն ունեն Սևանա լճի պահպանումն ու դրա պաշարների գրագետ օգտագործումը»:

Դրան համապատասխան, փաստաթուղթը սահմանում է նաև բնապահպանական ոլորտում պետական գործունեության ուղղությունները՝ բնական պաշարների, այդ թվում նաև՝ ջրային պաշարների ու Սևանա լճի բնահամակարգի վերականգնումը, պահպանությունը և օպտիմալ օգտագործումը, անտառածածկույթի պահպանումն ու վերականգնումը, ատոմային էներգիայի անվտանգ օգտագործումը, վտանգավոր քիմիական ու ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահման համապարփակ վերահսկումը, բնական և տեխնածին աղետների կանխատեսումն ու վաղ ազդարարումը, դրանց արագ արձագանքման համակարգի զարգացումը, արտակարգ իրավիճակների բացահայտման և հաղթահարման կառույցների ստեղծումը, բնակչության բնապահպանական **իրազեկության ու կրթվածության ապահովումը**:

Այս դրույթների էության վերաբերյալ պետք է նշել հետևյալը՝ փաստաթուղթը տալիս էր Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի ընդհանուր և վերացական սահմանում, ինչը թույլ չէր տալիս առանձնացնել պետության ռազմավարական կարևոր նշանակության գործունեության ուղղությունները՝ դրանք պաշտպանելու համար: Տեխնածին գործոնները՝ որպես բնապահպանական շահերի սպառնալիքներ, իրական նշանակություն ունեն երկրի բնապահպանական շահերի իրացման համար, ինչպես նաև բնակչության բնապահպանական մշակույթի զարգացումը: Սակայն սա չի սպառում սպառնալիքների ամբողջ շրջանակը: Այսպես, երկրի բնապահպանական շահերի ավելի էական սպառնալիքը բնապահպանական ճգնաժամն է, որը կարող է սահմանվել որպես մոլորակի էկոլոգիական հավասարակշռության պահպանում, որն ունի տեղական, տարածաշրջանային և գլոբալ առանձնահատկություններ, որը, համաձայն հատուկ ուսումնասիրությունների, ունի ոչ միայն տեխնածին, այլև բնական ներուժ: Բնապահպանական ճգնաժամի գլոբալ բնույթը երկրի բնապահպանական շահերի այս մեկնաբանությունը դարձնում է ավելի ու ավելի արդիական: Ակնհայտ է, որ այս ոլորտի թույլ զարգացումը, ինչպես նշված է Հայեցակարգում, բացատրում է այն փաստը, որ այն չի կարողացել դառնալ Հայաստանի

Հանրապետության բնապահպանական իրավական քաղաքականության արդյունավետ հիմքը:

Ուշագրավ են փաստաթղթի հակիրճությունը և միջոցառումների հստակությունը, որոնք հռչակում են որպես գործունեության ոլորտների ռազմավարություն: Ռազմավարության այս անկասկած դրական առանձնահատկությունն ունի նաև իր հակառակ կողմը, այսինքն՝ հակիրճ ներկայացված հայեցակարգային բաժինը, որը կարող է բաց թողնված լինել կամ պարզապես վատ մշակված լինել: Ազգային բնապահպանական շահի սահմանման գործնական բացակայությունը բացատրում է փաստաթղթում մշակված ռազմավարական սկզբունքը՝ արձագանքել երևույթի հետևանքներին, այլ ոչ թե պատճառներին: Ռազմավարությունում բնապահպանական ճգնաժամի գլոբալ համատեքստի լիակատար բացակայությունը թույլ է տալիս ենթադրել բնապահպանական սպառնալիքներից պաշտպանությանն առնչվող բոլոր միջոցառումների թույլ դոկտրինալ մշակում՝ պայմանավորված դրանց նեղ տեղայնացված ընկալմամբ:

Կարևոր հանգամանք և նույնիսկ եզրակացություն պետք է ճանաչել այն, որ փաստաթուղթը որևէ դրույթ չի պարունակում բնապահպանական իրավունքների ամբողջականության վերաբերյալ, ինչը լիովին իրավաչափ է՝ բնապահպանական հայեցակարգային անորոշության պայմաններում: Իր հերթին, այն կասկածի տակ է դնում էկոլոգիական սպառնալիքի հայեցակարգային հասկացությունը, քանի որ փաստաթուղթում չենք գտնում իմաստային համատեքստը: Այսպես, բնապահպանական անվտանգության ինստիտուցիոնալ ատրիբուտները ձևակերպելով՝ ռազմավարությունն անտեսում է բնապահպանական իրավունքը:

Այս համատեքստում կարևոր է նշել այն հանգամանքի մեթոդաբանական կարևորությունը, որ բնապահպանական անվտանգության ինստիտուտը պետք է ավելի լայն լինի, քան բնապահպանական իրավունքը, քանի որ այն ներառում է ոչ միայն բնապահպանական գործընթացների կարգավորման հետ անմիջականորեն կապված նորմեր, այլև էկոլոգիայի հետ անուղղակիորեն կապված նորմեր, որոնք վերաբերում են տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական, միգրացիոն և այլ հարաբերությունների կարգավորմանը: Այս դրույթի մեթոդաբանական կարևորությունն այն է, որ երբ բնապահպանական անվտանգությունը հավասարեցվում է բնապահպանական իրավունքին, ապա ազգային շահերի սպառնալիքների ամբողջ շրջանակն

անխուսափելիորեն կհանգեցնի բնապահպանական հարաբերությունները կարգավորող իրավական նորմերի խախտումների: Հետևաբար, այդ շահերի իրացման ռազմավարությունը պետք է սահմանափակվի գործող օրենսդրության խախտումների համար պատժիչ միջոցների խստացմամբ, մինչդեռ իրավիճակը կարող է պահանջել համարժեք քաղաքական գնահատական և նոր իրավական կարգավորումների ներդրում: Բացի այդ, բնապահպանական իրավունքի խնդիրները կհամընկնեն բնապահպանական անվտանգության խնդիրներին, որոնք անխուսափելիորեն կհակասեն ազգային անվտանգության շահերին:

Հայաստանի Հանրապետության գործող բնապահպանական հայեցակարգը (<< կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագիր), որը հաստատվել է կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1902-Լ որոշմամբ, շրջակա միջավայրը հռչակում է որպես պետության առաջնահերթություններից մեկը ազգային շահերի ապահովման գործում: Այնուամենայնիվ, արված մեկնաբանությունների լույսի ներքո պետք է նշել, որ Ծրագրի բնապահպանական անվտանգության վրա շեշտադրումը նվազեցնում է փաստաթղթի հայեցակարգային նշանակությունը և հակասում է դրա հիմնական սկզբունքին՝ ստեղծել անհատի, հասարակության և պետության շահերի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ, ինչն առավել կոնկրետ արտահայտվում է Հայաստանի Հանրապետությունում կայուն սոցիալ-տնտեսական զարգացման վրա կենտրոնացմամբ:

Սակայն փաստաթուղթը չի սահմանում ազգային պետական շահերը բնապահպանական ոլորտում: Հետևաբար, «էկոլոգիական անվտանգություն» հասկացությունը զուրկ է ամուր հայեցակարգային հիմքից:

Կարծում ենք, որ բնապահպանական ազգային-պետական շահի հասկացությունն ինքնին որպես էկոլոգիական հայեցակարգ ձևավորող չէ, որը բնապահպանական ոլորտի Հայաստանի Հանրապետության կողմից պաշտոնապես ընդունված տեսակետների համակարգն է: Հայեցակարգում դժվար է գտնել բնապահպանական իրավիճակի ազգային-պետական հատկանիշներ և գնահատականներ: Փաստաթուղթը հիմնված է գլոբալ գնահատականների և արժեքների վրա, ինչը հստակ բացատրվում է ոչ միայն էկոլոգիական ճգնաժամի գլոբալ բնույթով, այլև բնապահպանական օրենսդրության և, իհարկե, բնապահպանական հայեցակարգի ընկալունակությամբ:

Այս հանգամանքների պատճառով պետական բնապահպանական քաղաքականության տարածաշրջանային ասպեկտը, որը, անկասկած, ավելի կարևոր դեր է խաղում բնապահպանական անվտանգության ապահովման գործում, քան գլոբալը, թվում է թերզարգացած: Ավելին, բնապահպանական ոլորտում ազգային-պետական շահերի թույլ արտահայտվածությունն ստիպում է երկրին հետևել գլոբալ բնապահպանական ռազմավարության՝ ի վնաս կայուն զարգացման: Օրինակ՝ շրջակա միջավայրի համար վնասակար արդյունաբերությունն անխուսափելի է զարգացման պատմական այս փուլում, որտեղ գտնվում է ժամանակակից Հայաստանը, և դրանից արմատապես հրաժարվելը կնշանակի տնտեսական աճի տեմպի զոհաբերում: Այս համատեքստում հիշատակվում են այն երկրների բնապահպանական քաղաքականության օրինակները, որոնց ազգային-պետական շահերն առաջնահերթ են զարգացման ռազմավարությունների մշակման գործում: Հայտնի է, որ այդ երկրների թվում են ոչ միայն Չինաստանը, Հնդկաստանը և Բրազիլիան, այլև ամենահզոր տնտեսություններ ունեցող երկրները: Օրինակ՝ Միացյալ Նահանգները դեռևս չի միացել օզոնային շերտը քայքայող նյութերի արտանետումների սահմանափակման մասին միջազգային կոնվենցիային:

Ինքնիշխանությունը պետական քաղաքականության ամենակարևոր սկզբունքն է, և դրա իրավական ինստիտուցիոնալացումը ենթադրում է ազգային շահերի իրականացում: Բնապահպանական ոլորտի ինքնիշխանությունն անհատի, հասարակության և պետության ինքնիշխանության դրսևորման ձևերից մեկն է, և, ունենալով սահմանադրական հիմք, այն օրինականացվում է օրենսդրությամբ՝ ապահովելով անհատների և քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները բնապահպանական ոլորտում: Բնապահպանական ինքնիշխանությունը քաղաքական-իրավական կատեգորիա է, որը արտացոլում է բնապահպանական գործընթացի առկա ինստիտուցիոնալ քաղաքական և իրավական պայմանների ու բնապահպանական ոլորտի միտումներով երկրի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքով պայմանավորված բնապահպանական շահի միջև կապը: Բնապահպանական ինքնիշխանության իրացումն իրականացվում է բնության օգտագործման և պաշտպանության ինստիտուցիոնալ-իրավական կարգավորման ձևով: Բնապահպանական ինքնիշխանության պաշտպանությունը պահանջում է ինստիտուցիոնալ աջակցություն՝ ներառելով պետական բնապահպանական քաղաքականության մշակումը, ինստիտուցիոնալ-իրավական դաշտը և

կազմակերպությունների համակարգը՝ որպես բնապահպանական քաղաքականության ինտեգրված սուբյեկտ:

Հայաստանի Հանրապետության բնապահպանական ինքնիշխանությունը պաշտպանելու համար անհրաժեշտ է հստակ ձևակերպել երկրի ազգային-պետական բնապահպանական շահերը՝ առանց որի անհնար է հստակ և ճշգրիտ բնապահպանական քաղաքականության, արդյունավետ բնապահպանական օրենսդրության և, համապատասխանաբար, կայուն սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացումը:

Այսպիսով, անհրաժեշտ է կատարել հետևություն, որ.

1. բնապահպանական ոլորտում Հայաստանի Հանրապետության շահերի հայեցակարգային ձևակերպումն իրականացվում է ծրագրային փաստաթղթերում նպատակների և խնդիրների հոչակման միջոցով, որոնք սահմանում են բնապահպանական գործընթացների պետական-իրավական կարգավորման ռազմավարությունը և ապահովում են Հայաստանի Հանրապետության էկոլոգիական հայեցակարգի սկզբունքների և նորմերի հստակեցումն ու զարգացումը:
2. Բնապահպանական գործընթացների կարգավորման պետաիրավական ռազմավարությունը, լինելով բնապահպանական հայացքների համակարգ, ձևակերպում է բնապահպանական գործընթացների պետական-իրավական ձևավորման հիմքերը, որոնք ծառայում են որպես իրավական սկզբունքներ էկոլոգիական իրավունքի նորմերի և ինստիտուտների ձևավորման գործում: Հետևաբար, բնապահպանական անվտանգության ինստիտուտի ձևավորման համար անհրաժեշտ է ազգային անվտանգության ընդհանուր խնդիրներին համարժեք բնապահպանական քաղաքականության հայեցակարգ: Ցավոք, այսօր պետք է ընդունել, որ պետությունը չունի Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերի հստակ ըմբռնում:
3. Բնապահպանական շահերը մենք դիտարկում ենք որպես անհատների, հասարակության և պետության համակցված կարիքներ՝ պահպանելու էկոլոգիական հավասարակշռությունը գլոբալ, տարածաշրջանային և ազգային մակարդակներում՝ մոլորակի վրա կենսոլորտի մաս կազմող բարենպաստ մարդկային բնակավայրերը պահպանելու համար: Այն նաև քաղաքական-

իրավական կատեգորիա է, որն արտացոլում է բնապահպանական քաղաքականության առաջնահերթությունները՝ հիմնված բարենպաստ միջավայրի և կայուն զարգացման իրավունքի իրականացման վրա: Հայաստանի Հանրապետության բնապահպանական շահերը բաղկացած են իր տարածքում և դրանից դուրս էկոլոգիական հավասարակշռության պահպանումից և կայուն զարգացման ապահովումից:

**NATIONAL AND ENVIRONMENTAL SECURITY.
THE CONCEPTUALIZATION OF THE ENVIRONMENTAL INTERESTS OF THE
REPUBLIC OF ARMENIA AND THE LEGAL METHODS OF THEIR PROTECTION**

MNATSAKANYAN VAHAGN

PhD student, Applicant at the Chair of Law,
European University of Armenia

Abstract. The article is devoted to the analysis of the concept of security, focusing on state security and its component, environmental security. It presents the origin and the development of national security, within which environmental security holds a significant place. The analysis includes the legal foundation of the concept of “interest,” as well as the legal justification of state interest and environmental interest. It highlights the necessity of institutionalizing the concept of environmental security in current legislation and state strategy, conditioned by environmental interest.

Relevant conclusions are drawn regarding legislative gaps, and the conceptualization of environmental interest along with methods for its protection are presented.

Key words: security, national security, environmental security, interest, national interest, environmental interest, environmental strategy, environmental sovereignty.

**НАЦИОНАЛЬНАЯ И ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ.
КОНЦЕПТУАЛИЗАЦИЯ ЭКОЛОГИЧЕСКИХ ИНТЕРЕСОВ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
И ПРАВОВЫЕ МЕТОДЫ ИХ ЗАЩИТЫ.**

МНАЦАКАНЯН ВААГН

Соискатель ЕУА, Кафедра юриспруденции

Аннотация. Статья посвящена анализу понятия безопасности с акцентом на государственную безопасность и её составную часть — экологическую безопасность. Представлены происхождение и развитие национальной безопасности, в которой экологическая безопасность занимает важное место.

Анализ включал правовое обоснование понятий интереса, государственного интереса и экологического интереса. Обосновывается необходимость институционализации понятия экологической безопасности в действующем законодательстве и государственной стратегии, обусловленная экологическим интересом. Сделаны соответствующие выводы относительно пробелов в законодательстве, а также представлены концептуализация экологического интереса и методы его защиты.

Ключевые слова: безопасность, национальная безопасность, экологическая безопасность, интерес, национальный интерес, экологический интерес, экологическая стратегия, экологический суверенитет.

Գրականության ցանկ.

1. Վ.Հ.Վիրաբյան, ՀՀ պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը, 1918-1920 թթ., Երևան, ԵՊՀ, 2015 թ., էջ 15-16:
2. Մ.Մ.Թելունց, «Բանբեր Երևանի համալսարանի», 3 (93), Երևան, 1997 թ., էջ 177-185:
3. Է.Բ.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., 1976 թ.,
4. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատված ՀՀ Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով:
5. Свободная мысль. 1994. №4. С. 16.
6. Словарь специальных терминов. М., 1994.
7. Митрохин В.И. Национальная безопасность России // Интеллектуальный мир. 1995. №6.
8. Общая теория национальной безопасности: Учебник / Под ред. А.А. Прохожева. М., 2002. С. 40.
9. Поздняков Э. Национальные интересы: теория и практика. М., 1991. С. 3.
10. Ракитский Б. Культура и интерес нации // Вопросы экономики. 1994. №2.

Հոդվածը գրախոսվել է 18.02.2026
Ներկայացվել է տպագրության 24.02.2026